



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material





200  
262-ՊԴ

200  
262-ՊԴ

ԱՆԱՐԱՑ ՅԴՈՒԹԵԱՆ

ԵՂԲԱՑՄՈՒԹԻՒՆ

22 APR 2013

7005

U b g

զարողեացուց

q u e s t i o n

### **የጥቃትና፡**

Ա. ԿՐԵՆՃ. Ա. 25

A small, simple line drawing of a dragonfly, oriented horizontally with its wings spread wide. It has a segmented body, two large compound eyes, and four long legs.

Znqknnn

*աշխատասիրննոթիռներ*

28

281  
P-73 up

ପ୍ରକାଶକୁ

ՖԻՄՆԱՄԵԱՅ ՅՈՐԵԼԻՒՆԻ

## ԱՆԱՐԱՏ ՑՂՈՒԹԵԱՆ

ՄԱՐԵՄԱՅ

ՏԱՄՈՒՆԻ 1854 ԴԵԿԱԴԵՄՈՒԹՅՈՒՆ 8

Digitized by Google



Մ Խ Ի Թ Թ Ա Ր Ե Ա Ն Տ Ա Ր Ա Ր Ե Ա Ն

1904

Իրաւունս համարիմ, ով մայ-  
ռագորովորդիք Մարեմայ, զար-  
թուցանել զհաստատուն միտս  
ծեր յիշատակօք առանձնա-  
շնորհութեանցն Աստուածածնի  
Մարեմայ, զի վառեալ բոր-  
սոքեսցուք ի ճշմարիտ սէր  
նորա, եւ հիւսեսցուք եռանդնա-  
լից աղօթիցն անուշահոտ վար-  
դիւք պսակ մի փառաց՝ ի  
պսակել մերովսանն զՄայըն  
մեր զսիրելիք ի ցնծալից աւուր-  
ոսկեղին Յոքելինի նորա:

Հ. ԹԱՐԻՔՈՍ ԹՈԹԻՆԵԱՆ

“Յայսմ” հետէ երանես-  
ցն ինձ ամենայն աղքը։  
Ղուկ. Ա. 48:

Սուրբ Աստուածածնի այս փա-  
ռաբաննական խօսքերուն ճշմար-  
տութեան վկայ են մեծամեծ եւ  
ոգեւորեալ պատրաստութիւնք՝  
զոր կը տեսնեն ամենայն ազգք եւ  
ազննք, որպէս զի հոգւով եւ  
ճշմարտութեամբ կատարեն իրենց  
երկնաւոր եւ սիրելի Մօր Մա-  
րեմայ ոսկեղէն Յորելեանը։

Ապաքէն բերկալից ուրախու-  
թեան եւ անսմոռաց յիշատակի  
արժանի է առաջիկայ տարիս,  
վասն զի յ8 Դեկտեմբերի կը լրա-  
նայ կու դար, երբ յիսուն տարի  
յառաջ յամի 1854 յ8 Դեկ-

տեմբերի սուրբ Եկեղեցին իւր  
տեանելի գլխոյն Պիոսի Թօ.ի հան-  
դիսական վճռովն Աստուածամօր  
Մարեմայ երանելի ճակատին  
շուրջն բոլորեց Անարդար Յշո-  
նեան Հարդարակետա-նեան ական-  
ակապ եւ մարգարտաշար լու-  
սապատկը:

Հստնախախնամութեանն Աս-  
տուծոյ՝ այժմու փառօք եւ պա-  
տուով իշխող համանուն Քա-  
հանայապետին Պիոսի Ժ.ի վե-  
ճակեալ էր, որ մեծապայծառ  
փառաւորութեամբ տօնախմբել  
տայ կաթողիկեայ հաւատացերց՝  
Մարցեմայ Անարդար Յշո-նեան  
իրեւ հասն հասաւոյ հռչակուած  
վարդապետութեան՝ յիշնամեայ  
Յովելեանը:

Պիոս Ժ.երորդ Ս. Քա-  
հանայապետն 1904 տարւոյն

Փետրուարի 2ին շօջաբերական  
թուղթ մի հրատարակած էր  
Մարեմայ Անարդար Յղութեան  
վրայ, յորում ի մէջ այլոց այս-  
պէս կը խօսի. «Որպէս զի երկնից  
առատ շնորհաց օգնութեամբն  
արժանաւորինք այս տարւոյս մէջ  
առանձինն կերպով փառաւորել  
զՄարիամ եւ իւր առաքինու-  
թեանց նմանիլ, միանգամայն  
որպէս զի բաւական ըլլանք իրօք  
ի գործ գնել Մեր դիտաւորու-  
թիւնն, որ է նորդէլ պաշենայն  
Էն Քըլիուանի-, հետեւեցանք  
Մեր նախորդ Քահանայապետաց  
սովորութեան՝ զոր կը պահէին  
իրենց գահակալութեան միջոցին,  
եւ ըստ այնմ Մենք ալ որոշե-  
ցինք շնորհել կաթողիկեայ տի-  
եզերաց արքաւոյ կաքչէ ներդու-  
նեն ճը Յորելեանի ձեւով»:

Հ Ա Յ Ա Ր Ա Վ Ի Ւ Խ Ե Խ Ե Խ Ե Խ Ե Խ  
Պ Ա Յ Ա Ր Ա Վ Ի Ւ Խ Ե Խ Ե Խ Ե Խ Ե Խ Ե Խ  
Խ Ե Խ Ե Խ Ե Խ Ե Խ Ե Խ Ե Խ Ե Խ Ե Խ Ե Խ Ե Խ  
Խ Ե Խ Ե Խ Ե Խ Ե Խ Ե Խ Ե Խ Ե Խ Ե Խ Ե Խ Ե Խ

Ա. Երեք անգամ այցելու-  
թիւն ընել ժողովրդապետա-  
կան եկեղեցւոյն, կամ եթէ  
չկայ, զլիսաւոր եկեղեցւոյն, եւ  
հոն ժամանակ մը աղօթել ըստ  
դիտման Ս. Քահանայապետին:  
(Իսկ ուր որ Սայր-եկեղեցի  
կայ, ժողովուրդն այցելու է  
անոր:)

Բ. Ցոքելեանի միջոցին պէտք  
է մէկ անգամ ծոմ պահել եւ  
մաեղէն ուտելէ ժուժկալել: Սա-  
կայն, այս պարտաւորութիւնս  
չի կատարուիր այնպիսի օրւան  
մը մէջ, որ արդէն իսկ պար-  
տաւորեալ պահք մի է:

Գ. Խորհրդական խոստո-  
վանութիւնն կատարել եւ հա-  
ջորդիլ:

Դիտելի է, որ լիակատար  
յորելեան ներողութիւնս մէկ ան-  
գամ միայն կրնայ վաստրկուիլ,  
բայց զայն կրնանք մերձեցընել  
նաեւ քաւարանի հոգւոց:

Այս պայմաններուն վըսյօն նե-  
մական լշուինալուսուն+ էրեւնց լըմ-  
բերական նողներուն մէջ իր իսուն:



Թէ երբ հրատարակուեցաւ  
Անարատ Յղութեան վարդա-  
պետութիւննը:

Ի սկզբան 1848 տարւոյն խոռո-  
վարար ու ապստամբ ողի մը  
տիրած էր Եւրոպայի ազգաց  
վրայ, եւ նոյն իսկ ի Հռոմ քրի-  
ստոնէութեան մայրաքաղաքին  
մէջ այնչափ սաստկացած էր  
ապստամբական յուղումն ընդ-  
դէմ օրինաւոր իշխանութեան, որ  
Պիոս Թ. երորդ Քահանայապետն  
ստիպուեցաւ Հռոմէն հեռա-  
նալ, եւ դրացի Նէապոլսոյ թա-  
գաւորին պաշտպանութեանն եւ  
ասպնջականութեան ապաւինիլ:

Պիոս Թ. երորդ՝ իւր նախոր-  
դաց օրինակին համաձայն, կրած  
վշտաց ու նեղութեանց մէջ  
դիմեց Երկնից թագուհւոյն՝ որ  
քրիստոնէից անվկանդ օգնականն  
է. բայց Մարեմայ հզօր պաշտ-  
պանութեանն արժանաւորելու  
համար, ըստ իւր վաղեմի փափա-  
քին՝ որոշեց ենթարկել անդրագոյն  
հասուն քննութեանց եւ խոր-  
հրդակցութեանց Մարեմայ Ա-  
նարատ Յղութեան անզուգական  
առաւելութիւնն, որպէս զի յետոյ  
— եթէ Աստուծոյ կամքն ու  
հաճոյքն է, — հռչակէ հրա-  
տարակէ զայն իբրեւ Աստուծմէ  
յայտնուած վարդապետութիւն  
հաւատոյ:

Նոյն ժամանակ Ս. Քա-  
հանայապետն ապաստանած էր  
ի քաղաքն Կայեթա, եւ անկէ

յամի 1849 Փետրուարի 2ին հրատարակեց շրջաբերական թուղթմուռյեալ առ ամենայն թեմական եպիսկոպոսունս, ինդրելով որ ըստ կարելոյն փութով ծանուցանեն եւ հաղորդեն իրեն նախ, իրենց կարծիքն ու փափաքն այս վարդապետութեան նկատմամբ, միանգամայն իրեն տեղեկութիւն տան, թէ իրենց թեմին հաւատացեալք որպիսի ջերմեռանդութիւն ունին Անարատ Ծղութեան վարդապետութեան մասին. Ելլորդ ծանուցանեն թէ կղերն եւ ժողովուրդն կը բաղձան արդեօք եւ թէ որպիսի ինչ է իրենց փափաքն, որ Ս. Գալին իւր ճոխութեամբն որոշէ այս վարդապետութիւնս:

Երկնից թագուհին փառաւորելու դիտմամբ՝ այս առաջին

քայլն առնուելէն անմիջապէս ետքը, ուղափառ պետութիւնք ձեռք զարկին եւ ի Հռովմ ծագած ապստամբական յուղումը զինու զօրութեամբ զսպեցին նուածեցին։ Յամի 1850 Ապրիլ 12ին Բարձրեալն շնորհեց Ս. Քահանայապետին դաւնալ ի մայրաքաղաքն Քրիստոնէութեան։

Երջաբերական թղթոյն պատասխաններն հասած էին հետզիւտէ գրեթէ Այս հաշիվ Եպիսկոպոսներէ՝ որոնց գրուած էր։ Ասոնք իրենց թղթերուն մէջ առանց երկրայութեան կը յայտնէին թէ իրենց եւ թէ ժողովութեան կողմանէ, որ հաւատք կ'ընծայէն Մարեմայ Անարատ Ծղութեան վարդապետութեան՝ որ ի հնուց անընդհատ աւանդութեամբ եկած է։ Յետոյ գրեթէ

ամէն եպիսկոպոսունք թախանձանօք կը հայցէին՝ որ Ս. Քահանայապետն հաճի անյապղղությունը տալ: — Ասոր վըայ բաւական ատեն ալ սահեցաւ անցաւ այլեւայլ խորին քննութեամբ եւ խորհրդակցութեամբ, եւ վերջապէս յամի 1854 Օգոստոսի 1ին Պիոս Թ. Երորդ Յոթելեան ներողութիւն մը հրատարակեց, որուն մասնաւոր նպատակն էր, այն ծանրակշռողոշումն ու վճիռը տալին յառաջ՝ յորդորել կաթողիկէ եկեղեցւոյ համօրէն որդիքն, որ ինդրէն իրենց երկնաւոր չօրէն չնորհէլ չոգւոյն սրբոյ լոյսն ու առընթերակացութիւնը:

Յամի 1854 Նոյեմբեր ամսոյն մէջ Ս. Քահանայապետն գումարեց չորս բագմաթիւ բարձրաս-

տիճան եկեղեցականներ եւ աս-  
տուածաբաններ, որպէս զի վեր-  
ջին խորհրդակցութիւն մ'ալ կա-  
տարեն այն վարդապետութեան  
վրայ, զըր իրեւ մասն հաւատոյ  
հոչակել կը փափաքէին: Բա-  
նակցութիւնք կատարուեցան գա-  
հերիցութեամբ երեք Կարդինա-  
լաց՝ որոնց մասնակից եղան բաց ի  
աստուածաբաններէն եւ 150 ե-  
պիսկոպոսք: Զորս օր գումա-  
րումներ եղան՝ եւ բանակցու-  
թիւնք տեւեցին քսան ժամ, եւ  
հուսկ ուրեմն մերձեցաւ վերջին  
նիստը: Հասնկարագրելց ականա-  
տես եւ ժովողցն մասնակցող  
անձի մը, “Նցն միջոցին Ս.  
Պետրոսի եկեղեցւոյն աշտարակին  
ժամացցցն զարկաւ տաներկու։  
Խսկոյն ի ծունք իջան բոլոր ժո-  
ղովականք եւ չըելլակ Տէառուն

- 16 -

—

7/XI 1922



աղօթքը մատուցին։ Աղօթքէն  
եաքը խորհրդական լուռթիւն մը  
տիրեց, եւ ամէնքն իրենց առաջին  
տեղը դարձան։ Քանի մը բան ալ  
խօսուեցաւ, եւ յանկարծ սաստիկ  
ծափահարութիւն մը սկսաւ ի  
պատիւ Ս. Քահանայապետին,  
իբրեւ բացատրութիւն իրենց  
եռանդնալից զգածմանց առ Ս.  
Դաշն՝ յաթոռն Պետրոսի, եւ  
իբրեւ նշան իրեն հետ սերափիւ  
կապուած ըլլալուն. ամէնքն  
ոգեւորուած էին եւ զրեթէ  
միաձայն եւ միաբերան գոչեցին.  
«Պետրէ, ուսո՞ մեզ եւ հաս-  
տատեած զեղբարս քո»։ Այս  
գոշմամբ ի՞նչ կը հայցէին արդեօք  
հովիւք իրենց հովուապետէն,  
բայց եթէ որ Անարատ Յղու-  
թեանվարդապետութիւնն իբրեւ  
նաևն հասարաց հանդիսապէս

հռչակէ հրատարակէ։ Սոյն խօս-  
քերս ամէնուն սիրան յուղեցին  
բուռն ազդեցութեամբ. բայց  
լողին ու տեսնողը միայն կարող  
է ըմբռնել, թէ իրենց իղձերն  
ինչափ մեծ եւ իրենց հայցուածքն  
որչափ սրտաբուղիս էին. որով-  
հետեւ ոչ խօսք եւ ոչ զրիչք  
բաւական են գաղափար մը տալ  
մեզի անոր վրայօք։

Ս. Քահանայապետին սիրտն  
անգամ մեծապէս զլածուած  
էր, եւ հաւատացելոց միաբան  
պաղատանքն իւր վրայ սաստիկ  
տպաւորութիւն մ'ըրաւ։ Յամի  
1854 Դեկտեմբերի 1ին գումա-  
րած Կարդինալաց ժողովքին մէջ  
որոշուեցաւ որ յ8 Դեկտեմբերի  
յամի 1854 Մարեմայ Անարատ  
Յղութիւնն իբրեւ հասարաց հանդիսապէս  
հանդիսապէս հրատարակուի։

Պայմանեալ օրւան նախընթաց երեկոյն ամպապատ էր եւ անձրեւային, բայց կէս զիշերէն ետքը անձրեւը դաղրեցաւ, եւ Դեկտեմբերի 8ին առաւօսն ամպերը ցրուեցան եւ մշուն լուծաւ փարատեցաւ. գեղեցիկ ու կապուտակագոյն երկինքն իւր լոյսն սփռեց տարածեց քրիստոնէութեան մյուրաքաղաքին վրայ, ինչպէս որ վայել իսկ էր այդպիսի մեծ տօնախմբութեան համար: Ս. Քահանայապետն Պիոս Թ. երրորդ ժամն ուժուկէսին եկաւ երեւցաւ. հանդիսական չուն՝ — որուն նմանն աշխարհիս վրայ ցանցառ կը տեսնուի, — սկսաւ շարժիլ. ասոր մասնակից էին աշխարհիս չորս կողմանէ եկած հարիւրի չափ եպիսկոպոսք, 44 արքե-

պիսկոպոսք, 1 պատրիարք մը եւ 54 կարդինալք եւ Ս. Քահանայապետն Պիոս Թ. երրորդ, որոնք իրենց ամենափառաւոր եկեղեցական զգեստներն հագած էին: Վատիկանի պալատէն ելան եւ ամենայն սրբոց Լեթանիան երգելով ուղեւորեցան լայնատարած շքեղ հրապարակին վրայէն գէպ ի Ս. Պետրոսի Պաղեկիքան, որ արտաքյ կարգի փառաւորութեամբ զարդարուած էր: Երբ որ Ս. Քահանայապետն եկեղեցին մատաւ, Լեթանիան արդէն աւարտած էր. վայր մի ամենասուրբ Հաղորդութեան երկրագութիւն մատուցանելէն ետեւ, Լեթանիային միւս յարակից աղօմքերն ալ վրուցեց, եւ յետոյ գնաց Աւագ խորանն, ուր ձայնաւոր պատարագ մատոյց

ժամը 10ին մօտ։ Սուրբ Աւետա-  
րանն եղացուեցաւ թէ լս-  
տիներէն եւ թէ յունարէն  
լեզուաւ։ Հիմակ ալ եկած  
հասած էր այն նշանաւոր եւ  
շնորհալից վայրկեանն, յորում  
երկնից թագուհւոյն փառաց  
պասկին վրայ թանկազին պա-  
տուական քար մալ պիտի  
աւելնար։ Կարդինալաց ժողովքին  
ալետն, որուն ընկերացած էին  
արեւելեան եւ արեւմտեան ե-  
կեղեցւոյն չորս երիցագոյն ե-  
պիսկոպոսք, քահանայապետա-  
կան Գահուն աստիճաններուն  
վրայ ի ծունր իջնալով՝ այդպէս  
խօսեցաւ։ “Հայր սուրբ, այս  
անարին պատարագիս մատուց-  
ման ժամանակ, առաքելոց իշ-  
խանին հոյակապ տաճարիս մէջ,  
եւ հանդիսապէս գումարուած

եւ բազմաթիւ  
ժողովրդեան առջեւ, հաճէ  
բարձրացընել քու առաքելական  
ձայնդ եւ հոչակել հրատարակել  
Մարեմայ Անարատ Յղութիւնն  
իբրեւ հասն հաւատոյ։ որուն  
վրայ պիտի ցնծան երկնք եւ  
երկիրս պիտի հրմուին։ Ս. Քա-  
հանայապետն սրտաշարժ ուրա-  
խութեամբ ընդունեցաւ բովան-  
դակ եկեղեցւոյն միաձայն եւ  
միաբան առաջարկութիւնն, եւ  
հաւանեցաւ կատարել փափաքն՝  
որով ինքն ալ բորբոքած էր։ բայց  
յայտնեց թէ որոշել վՃիռն  
տալէն յառաջ՝ կ'ուգէ անգամ  
մալ հայցել լոյս ի բարձանց։  
Ուստի, թէ ինք եւ թէ համօրէն  
ժողովականք ի ծունր իջան՝  
հոգւոյն սրբոյ օգնութիւնն հայ-  
ցելու համար։ Ըստ ինքեան քա-

Հանայապետական երգիչք միայն  
պիտի եղանակէին Եկ սուրբ Հոգի  
երգը, սակայն ներկայ գտնուող  
քանի մը բիւր անձինք բնածին  
ազդմամբ ի ծունը իջնալով՝  
եռանդնալից ոգեւորութեամբ  
իրենց ձայնն արձակեցին եւ քա-  
հանայապետական երգիչներուն  
ձայնին հետ խառնեցին։ Յայտնի  
կը նշանառուէր, որ ներկայ գըտ-  
նուողներն ակնկառոց նշանաւոր  
բանի մը կը սպասէին։

Ամէնուն սիրտն յու գոււած  
եւ շարժած էր՝ տեսնելով  
թէ հանդիսական գործողութիւնն  
մօտ է, սակայն խոր լութիւն  
կը տիրէր ահազին բազմու-  
թեան մէջ։ Նշն միջոցին Ս.  
Քահանայապետն սկսաւ իւր  
այրական մեղմ ձայնիւն հրա-  
տարակութիւնն ընել. ամէնքն

ի ներքուստ այնչափ զգածուած  
էին, որ առատ արտասուք  
շատերուն աչքերն ողողեցին.  
Ս. Հայրն ալ սաստիկ շարժած  
ըլլալուն՝ իւր ձայնն սկսաւ կտրիլ.  
բայց կամաց կամաց զօրանալով՝  
կրցաւ յաջորդ խօսքերն արտա-  
սանել հանդարտ՝ բարձր ու  
հանդիսական կերպով. “Իշ-  
խանութեամբ Ծեառն մերոյ Յի-  
սուսի Քրիստոսի, պրոց Ա-  
ռաքելոցն Պետրոսի եւ Պողոսի  
եւ իմովս իսկ յայտ առնեմք,  
հռչակեմք եւ որոշեմք, թէ կարտա-  
պէտունիւնն այն որ պաշտպանէ,  
թէ ամենասուրբ Կոյսն Մարիամ  
առանձինն արտօնութեամբ եւ  
գերազանց շնորհօքն Աստուծոց  
եւ արժանեօք Յիսուսի Քրիստոսի  
ազատ պահեցաւ յամենայն արա-  
տոյ սկզբնական մեղաց, կարտա-

Աւուսունիւնն այն յԱսուսունծոյ  
 յայտնեալ է. վասն այնորիկ  
 պարտին ամենայն հաւատացեալք  
 հաւատալ այնմիկ հաստատու-  
 թեամբ եւ անշարժ մաօք։ Ս.  
 Քահանայապետին այս վճռէն  
 ետքը, ամենուն աչքերն փայլեցան  
 ցնծալից եւ զմայլիչ ուրախու-  
 թեամբ. քաղաքին բոլոր զան-  
 գակներն ու Ա. Հըելուակն Երէկն  
 որոտացող թնդանօթներն աւե-  
 տեցին աշխարհիս սոյն ամենա-  
 կարեւոր եւ ուրախառիթ դէպքը,  
 եւ հազարաւոր բերաններ բար-  
 ձրանայն եղանակեցին օքեն  
 Ասուսունծ դսհաննէմէ երգը,  
 որով վերջացաւ մեծապայծառ  
 եւ վեհ տօնախմբութիւնն, որուն  
 նմանն բնաւ վէր առասունծ Հասուն  
 ժաղանը Ս. Պետրոսի եկեղեցւոյն  
 մէջ։ Հանդիսական օրւանս իրի-

կունն, Հռոմ քաղաքը մեր աչքին  
 առջեւ հիանալի տեսարան մը կը  
 պարզէր, վասն զի բոլոր տուներն  
 առհասարակ սկսեալ մեծատան  
 ասպարանքէն մինչեւ աղքատին  
 խրձիթը, փառաւորապէս զար-  
 դարուած եւ լուսաւորուած էին։  
 Խւրաքանչեւր ոք կը զգար, թէ  
 նոյն օրւան մէջ կաթողիկէ  
 սուրբ եկեղեցին լիովին կատարած  
 էր իւր որդիխական սիրոյ քաղցը  
 պարտքն, զոր ունէր առ Աս-  
 տուածմայր Կոյսն Մարիամ, որ  
 անարատ եւ օրհնեալ է ընդ  
 ամենայն ժամանակս։



Թէ ինչ կը Աշանակէ “Մարիամ” յղացած է սուսաց արատոյ մնաց,,:

Բնաբանիս ուղեղ իմաստն ըմբռնելու համար, միտ պէտք ենք դնել՝ թէ մեղքն երկու կերպարանօք կրնայ մտածուիլ, այս ինքն է՝ նախ իբրեւ Նշանական գործ, եւ երկրորդ իբրեւ Նշանական վճակ։ Մեղանչական գործն է կամաւոր զանցառութիւն աստուածային պատուիրանի. — եւ այդպիսի յանցանքէ եւ պատժապարտութենէ յառաջ կուդայ մեղանչական վեճակը կամ արատաւորին, որ իբրեւ հետեւ-

“— Անձն ականական Նշանց կը յարի հոգւոյն։

Ադամ մեղանչեց, եւ մեղանչական գործն իւր անձին միայն սեպհական էր. սակայն իւր հոգին տեւական արատ մ'ընդունեցաւ, որմէ հետեւեցաւ Նշանական վճակը, որ իբրեւ թշուառ ժառանգութիւն Ադամին՝ մարդկութեանս նախահօրմէն անցաւ իւր ամէն յաջորդաց վրայ։ Ահաւասիկ այս է ականական Նշանց, որ նոյն իսկ յղութեան վայրկենին կ'անցնի ամէն մարդու վրայ, այս ինքն է՝ նոյնհետայն երբ Աստուած զբանաւոր հոգին կը շնչէ մարմնոցն։ — Մենք ամէնքս Դաւթի մարդարէին հետ պէտք ենք խոստովանիլ, թէ “Անօրէնութեամբ յղացայ եւ ի մեղանաւ զիս մայր իմ. (Մաղմ.

Ժ. 6:) Մեղաց այս օրէնքիս են-  
թարկուած են Ազամայ ամէն  
զաւակունք . այսու ամենայնիւ՝  
այս օրէնքս մէկհատիկ բացառու-  
թիւն մ'ունեցաւ յտնչին տէն-  
օցնէաւ Առ-այն Վարչեմայ : Այն,  
ինք միայն իւր յդութեան առա-  
ջնին վայրկենէն զերծ մնաց սկզբնա-  
կան մեղաց ամէն արատէ . այն-  
պէս որ՝ եւ ոչ իսկ ամենափոքր  
վայրկեան մը մասնակից եղաւ մեր  
նախահօրն Ազամայ մեղքին ու  
պատժապարտութեան , եւ անկէ  
պատճառեալ արատաւորու-  
թեան : Աստուածամօր բարձր  
առանձնաշնորհութիւնն , այս  
ինքն Վարչեմայ Անարտու Յու-  
նիւնն ամէն ժամանակ եւ միշտ  
իսկ ճանչցուած ու հաւատա-  
ցուած է Կաթողիկէ Եկեղեցւոյ  
մէջ :

Յամի 1854 Դեկտեմբերի 8ին  
Պիոս թ. Երորդ Ս. Քահանայա-  
պետն , — որ իւր բարձր պաշ-  
տօնին բերմամբ աստուածային  
յայտնութեան եւ Եկեղեցական  
աւանդութեան պահապաննէ , —  
Հոգեւոյն սրբոյ խոստացած օժան-  
դակութեամբն լուսաւորուած ,  
Հրատարակեց իրբեւ Տառն հա-ա-  
ռոյ , Առ Վարչեմայ յդացած է  
աւանդոյ արտադրութիւնն —  
եւ սոյն վարդապետութիւնն —  
որ ի հնուց մեզի աւանդուած եւ  
դարէ գար խորարմատ տնկուած  
ու տոգորուած էր հաւատացելոց  
սրտին մէջ , — պայծառ խօս-  
քերով մեկնեց ու որոշեց :  
Սուրբ Եկեղեցին այն ատեն  
միայն սովոր է իրբեւ Տառն հա-ա-  
ռոյ հրատարացած վարչութեան-  
նիւն չը , երբ որ կը տեսնէ թէ

մարդիկ Աստուծմէ յայտնուած  
ճշմարտութիւնները կը ծամա-  
ծռեն եւ յամառութեամբ մոլո-  
րութիւն կը պաշտպանեն. միան-  
դամայն միշտ իսկ իւր անսխալ ճո-  
խութեամբն հերքած ու դատա-  
պարտած է մոլորելոց կարծիքն  
ու ծուռ վարդապետութիւնը:  
Դժբախտաբար շատ յաճախ պա-  
տահած է, որ բազմաթիւ ան-  
ձնիք՝ իրենց մոլորութեանց վրայ  
յամառած մնալուն պատճա-  
ռաւ, եկեղեցւոյ հաղորդութենէն  
կտրուեցան:

Մտադրութեան արժանի իրո-  
ղութիւն մի է, թէ այն միջոցին  
երբ հանդիսապէս որոշուեցաւ եւ  
հռչակուեցաւ թէ Ո՞արկամ յղա-  
ցած է առանց արտադոյ ոկնէնական  
Նշաց, վերոյիշեալ երկու ան-  
պատեհութիւնք տեղի չունեցան:

Աստուծամօր առանձնաշնոր-  
հութեան գէմ չկար հակառա-  
կութիւն մը ոչ հրատարակուե-  
լէն յառաջ եւ ոչ իսկ հրատա-  
րակուելէն ետքը: Ս. Եկեղեցին  
ոչ եթէ Ընտառապ Յղո-Ռեան  
կարդապէտութիւնն մոլորելոց գէմ  
պաշտպանելուն պատակաւ՝ հռչա-  
կեց հրատարակեց զայն իբրեւ  
մասն հառապոյ, այլ ասոր բուն  
շրթառիթն եղաւ, թէ հաւա-  
տացելոց եւ թէ սրբազն Քա-  
հանայապետին որդիական սէրն  
ու մեծարանքն՝ գոր ունէին առ  
սուրբ Կոյսն Մարիամ: Խնչպէս  
ըսինք, վճռոյս հրատարակուելէն  
ետքն ալ եկեղեցւոյ մէջ ոչինչ  
հակառակութիւն եւ հերետիկո-  
սութիւն եղաւ այս պատճառաւ:  
Կեղըակացըննենք ըսելով, — ինչ-  
պէս որ Մարեմայ Անարատ Յղու-

թիւնն հաստրակաց օքենէին մէկ  
մասնաւոր բացառութեանն է,  
նշյնպէս ալ այս խոշհշտաւոր  
կարդապէտութեանն՝ որով երկնից  
թագուհին փառաւորուեցաւ,  
միակ միաւոր է՝ յիշուած  
ուշուի:

Աստուծոյնախախնամութիւնն  
տրամադրած էր, որ Առաջեմայ  
Անարար Յըլս-Աւան վարդա-  
պէտութեանն իբրեւ Աստուծմէ  
յայտնուած ճշմարտութիւն, որ-  
ոշուի մեր ատեններն, որ-  
պէս զի միեւնոյն ժամանակ յա-  
ջողութեամբ հերքուին աշխար-  
հիս երկու գլխաւոր մոլորու-  
թիւնները, եւ դժոխական օձին  
զլուին առաթուր կոխուի եւ  
ջախջախի: Այժմու ժամանակիս  
մէջ ընդհանուր տարածուած եւ  
տիրող մոլորութիւնքն են, —

Քրիստոսի աստուածութիւնն ու-  
րանալ. միանգամայն եւս ուրա-  
նալ՝ թէ ամէն մարդ սկզբնական  
մեղքով աղտեղած ու արտաւո-  
րուած է: Մարեմայ Անարատ  
Յղութեան խորհուրդն՝ գողցես  
բարձրագոչ ձայնիւ կը հռչակէ,  
թէ Յիսուս Քրիստոս է Որդին  
Աստուծոյ: Իրօք ալ, անոր հա-  
մար Մարիամ աղատ պահուե-  
ցաւ սկզբնական մեղքէ, վասն  
զի որոշուած էր որ Մայր ըլլայ  
Անոր՝ որուն Հայրն՝ Աստուածիսկ  
է: Սուրբ Եկեղեցին կը դաւանի՝  
թէ մի միայն Աստուածամայրն  
Մարիամ աղատ ու սուրբ է  
սկզբնական մեղքէ. որով յայտ-  
նապէս կը վարդապետէ, թէ ան-  
նայն որդիւ հաշուան աշխարհք  
կու գան սկզբնական մեղքով աղ-  
տեղած ու վարակուած:

Անարատ Յղութեան հրա-  
տարակուիլն մեծ նշանակութիւն  
ունի նաև ճշմարիտ հաւա-  
տացելոց համար, որովհետեւ այս  
վարդապետութիւնս ոչ թէ միայն  
կենդանի կը պահէ մեր մոտաց  
մէջ եւ խորունկ կը տպաւորէ  
սուրբ հաւատոյս կարեւոր ճշմար-  
տութիւններն, այլ եւ կը յայտնէ  
մեզի, թէ անոնք ի՞նչ յարաբե-  
րութիւն ունին իրարու հետ։  
Մտոյգ է, թէ Մարեմայ Անա-  
րատ Յղութեան վարդապետու-  
թեամբն աւելի կը բարձրանայ  
գաղափարն զոր ունինք Աստուծոյ  
սրբութեան վրայ. վասն զի  
ակներեւ կ'իմանանք՝ թէ Աս-  
տուած չ' հանդուրժեր որ ակն-  
թարժ մ'ալ մեղաց ամենափոքր  
արատով նսեմանայ իւր ամեն-  
օր հնեալ Մօր սրբութիւնը։

Այս խորհրդաւոր վարդապե-  
տութեանս մէջ կ'երեւի նախ  
Աստուծոյ ամենակարողութիւնն.  
վասն զի թէ եւ իւր արդարու-  
թեամբն ու իմաստութեամբ  
օրէնքներ կը հաստատէ, —  
որոնցմէ դուրս ելել կարող չեն  
տկար արարածք, — սակայն  
ինք ըստ հաճութեան կամաց  
իւրոց կարող է բացառութիւն  
լնել։ Ապաքէն, վասն աւենայն  
որդուց մարդկան յղութիւնն է  
այն վայրկեանն, յորում սա-  
տանան մեղաց թշնն հոգւոյն  
մէջ անվըէպ կը հեղու, որով  
իւր իշխանութիւնն անոր վրայ  
կը տարածէ։ Բայց Աստուած  
յայտնեց իւր ամենակարողու-  
թիւնն Մարեմայ անձին վրայ,  
եւ զինք միայն ազատ կացոյց  
սկզբնական մեղաց օրէնքէն, եւ

շնորհեց որ նոյն իսկ իւր յղութեան վայրկինին կոխէ եւ ջախ-  
ջախէ դժոխային օձին զլուխը :  
— Կնկք բանիցս, պէտք ենք այս  
առանձնաշնորհութեանս մէջ  
նկատել մանաւանդ, թէ ինչչափ  
զօրաւոր եւ արդիւնագործ է  
Քրիստոսի փրկաւէտ մահն, որով-  
հետեւ շնորհիւ արժանեաց չար-  
չարանայն ու մահուն Քրիստոսի  
գերազանց արտօնութեամբ մը  
ազատ ու սուրբ պահուեցաւ  
Մարիամ սկզբնական մեղաց  
ամէն արատէ :

Ամբանանք մեր աչքն առ  
անբիծ ու սուրբ Մայրն մեր  
Մարիամ, որ կը յորդորէ զմեզ  
թէ իւր Աստուածորդւոյն Յի-  
սուսի խօսքին անսալով՝ արթուն  
կենանք ամէն վայրկեան եւ  
Ճշմարտապէս վախնանք մեղքէ

Եւ իրօք ալ զգուշանանք մեղան-  
չելէ : Օ՞ն ուրեմն, որդիական  
վստահութեամբ զիմենք մեր  
գորովագութ մօր Մարեմայ Աս-  
տուածածնի որ այնպիսի չնաշ-  
խարհիկ ձիգբերով եւ առաւե-  
լութեամբ օժտուած ու զար-  
գարուած է, թախանձելով որ  
յանձն առնու բարեխօսել առ  
Հայր եւ Որդի եւ սուրբ Հոգի,  
որպէս զի հաճին հաստատել մեր  
կամքը բարւոյն մէջ . եւ ջանանք  
հանապազ փախչել մեղքէ,  
որ ոտնակոխ ընելով Աստուծոյ  
սէրն ու Ճոխութիւնն՝ զմեզ մեր  
երկնաւոր Հօրէն կը բաժնէ:  
Ուրեմն, ապրինք Աստուծոյ  
սիրովն, որպէս զի Աստուծոյ  
սիրոյն մէջ մեռնինք, եւ սիրենք  
զԱստուած յաւիտեանս :

Աղօնեացու + վասն պայծառաւ-  
նեան ե- պարտածման սուլէ կա-  
նողէն Եկեղեցոյ, վասն սլէա-  
շան Քահանայաղէովին Ձրոյ  
Պիտով Ճաճ, ե- վասն դարձէն  
աշեայն Ձշաւորաց:

Աղօնեաց հաջը պաշտանու-  
նեան առածինին+ հետեւեալ  
սոլունեցով, սրուէ զէ ստանան+  
Աշունծոյ էլոն ե- սլէն-նի-ն  
սրով ե- հաւաց:



## Ա Ղ Թ Թ Ք

— անուշադ Կոյսն Մարէւմ:

Ով իմ անարատ թագու-  
հիս Մարիամ, ուրախ եմ ու  
կը ցնծամ պատանց, որ Աս-  
տուած զքեզ այսպիսի մեծ մա-  
քրութեամբ օրհնեց ու զարդա-  
րեց, եւ շնորհակալ կը լլամ իմ  
արարչիս, եւ կը բաղձամ միշտ  
նոյն գոհութիւնն իրեն մատու-  
ցանել, որ զքեզ առանձին շնոր-  
հօք, որպիսի եւ իցէ մեղաց բծէն  
ու արատէն պահեց: Կը ցանկամ  
յամենայն սրտէ որ բոլոր աշ-  
խարհքս ալ զքեզ ճանչնայ եւ  
զքեզ փառաբանէ իբրեւ այն  
պայծառ գեղեցիկ այգն, որ

միշտ զարդարուած է արդարութեան արեգական աստուածային փառօք. դուն ի սկզբանէ աշխարհի ընտրուած ես իբրեւ տապանակ մեր փրկութեան եւ ընդհանուր մեղաց ջըհեղեղէն ազատ մնացիր. կը բաղձամ միանգամայն որ բոլոր տիեզերք ճանչնան զքեզ, իբր սպիտակ եւ պայծառ շուշանն, որ փառց մէջ՝ — այս ինքն է մեղօք արատաւորուած եւ Աստուծոյ թշնամութեան մէջ ծնած՝ Աղամայ որդուոց մէջ, — կ'ածի եւ կը անուշահոտութիւնը կը բուրէ: Դուն մինակ Աղամայ սերբնոց մէջէն բոլորովին սուրբ, ամենեւին անարատ, եւ ներքուստ սիրելի ծնապ քու ստեղծողիդ, եւ հոգւոյն սրբոյ հովանաւորութեամբն առանց սուրբ կուսութեանդ արատաւորութիւն մը

հասնելու՝ յղացար նաեւ զթիսուս Քրիստոս:

Ո՞վ ամենաքաղցր, ամենասիրելի, անարտատ կյս Մարիամ, թող որ զքեզ գովեմ, փառաբանեմ ու փառաւորեմ. բայց դուն ալ քու ամենազթած աշքովիդ նայէ իմ ողորմելի հոգւոյս սոսկալի վէրքերուն վրայ եւ բժշկէ: Դուն որ քու կենացդ առաջին վայրկենէն բոլորովին սուրբ եւ գեղեցիկ քու Աստուծոյդ առջեւն երեւցար, ողորմէ ինձի, որ չէ թէ միայն մեղաց մէջ ծնած, այլ նաեւ մլրտութենէ; ետքն ալ մեղօք հոգիս արատաւորած եմ. մաքրէ սրտիս աղտելը, եւ քեզի հետ միացուր: Ո՞վ Մարիամ կյս, քեզի որ շնորհըը կրնայ զանալ Աստուած, որ զքեզ իրեն դուստր, մայր ու

թէ ճշմարիտ որդւոյ մը սիրան  
հոգ ունի՝ որ իւր սիրելի մօր սիրառ  
չվշտանայ։ Ուրեմն, որպէս զի  
զայդ կատարել կարենամ, տուր  
որ յամենայն զօրութենէ ջանամ  
ոչ միայն չվշտացընել Աստուած-  
որդւոյդ Յիսուսի սուրբ Սիրտն,  
այլ նաև սիրել զՅիսուս եւ  
զքեզ զՄայրդ ամէնօրհնեալ  
այժմ եւ յաւիտեան։ ամէն :

Ո՞վ Սիրտ քաղցրագութ իմյ  
Յիսուսի,  
Տուր ինձ միշտ սիրել ըզքեղ  
աւելի:

Ա, ԵՐԿՐՈ-ՌԵ-Ն 300 օր-ան՝ ամէն  
մէկ անգամուն համար:

Ովք քաղցր Սիրտ Մարեմայ,  
Եբ փրկութիւն իմ:  
Ներսոն-Ռին-300 օր-առ ամէն  
մէկ անգամուն Համար:

Անկանիմք առաջե քո Աս-  
տուածածին, եւ աղաչեմք զան-  
արատ զկցոսդ : Բարեխօսեա վասն  
անձանց մերոց, եւ աղաչեա զմի-  
ածին Որդիդ : Փրկել զմեղ ի  
փորձութենէ եւ յամենայն վտան-  
գից մերոց :

### Ա Դ Յ Թ Ք

Ողջ լր, թագուհի, մայր  
ողորմութեան, կեանք, քաղցրու-  
թիւն, եւ յոյս մեր. ողջ լր :  
Առ քեզ գուեմք աքսորեալ որ-  
դիքս Եւայի . առ քեզ հառա-  
շեմք հեծելով եւ ողբալով յայսմ  
արտասուաց վայրի : Արդ ով բա-  
րեխօս մեր, դարձն առ մեզ զաշ  
ողորմութեան քո, եւ զթիսուս  
զօրհնեալ պտուղն որովայնի քո՝  
յետ այսր աքսորանաց ցոյց մեզ,

ով գթած, ով բարեգութ, ով  
քաղցր կոյս Մարիամ, աղաչեա  
վասն մեր սուրբ Աստուածածին,  
զե արժանի լիցուք խոստմանցն  
Քրիստոսի . ամէն :

Ողջոյն թագուհի երինաւորաց,  
Մայր թագաւորին հրեշտակաց,  
ով Մարիամ ծաղիկ կուսանաց,  
որպէս զվարդ եւ զշուշան սփռեա  
զաղաշնս մեր առաջե Որդւց  
քոյ վասն փրկութեան հաւա-  
տացելոց :

Օրհնեացէ զմեղ սրբուհի Կոյսն  
Մարիամ հանդերձ գթած զաւ-  
ակաւն իւրով . ամէն :

## ԼԻԹԱՆԻԱ

Ի ԴՐԱՅԻ ԱՆՎԵՐԱԿ ՅԵՒ-ՆԵԱՆ ԿԱ-  
ՄԱՐԵՒՄ :

Տէր ողորմեաց :

Քրիստոս ողորմեաց :

Տէր ողորմեաց :

Յիսուս լուր մեզ :

Քրիստոս անսա մեզ :

Հայր երկնաւոր Աստուած . ողոր-  
մեաց մեզ :

Որդիփրկիչ աշխարհի Աստուած .  
ողորմեաց մեզ :

Հոգի Սուրբ Աստուած . ողոր .

Սուրբ Երրորդութիւն մի Աս-  
տուած . ողոր .

Անարատ Կոյս ի մէջ համօրէն  
կուսանաց՝ աղօթեա վասն մեր:

Անարատ Կոյս ի յղու-  
թեան աղօթ .

Անարատ Դուստր Հօր  
Աստուծոյ աղօթ .

Անարատ Մայր Որդւոյն  
Աստուծոյ աղօթ .

Անարատ Հարսն Հոգւոյն  
Սրբոյ աղօթ .

Անարատ Տաճար ամենա-  
սուլը Երրորդութեան աղօթ .

Անարատ պատկեր իմաս-  
տութեան Աստուծոյ աղօթ .

Անարատ արշալոյս Արե-  
գական արդարաւթեան աղօթ .

Անարատ Եւ կենդանի  
տապանակ ուխտի Եւ  
տեղի հանդատեան Յի-  
սուսի Քրիստոսի աղօթ .

Անարատ բողըոջ արմա-  
տոյն Դաւթի աղօթ .

Անարատ ճանապարհ որ  
տանիս առ Քրիստոս աղօթ .  
Անարատ կյս որ յաղ-  
թեցեր մեղաց աղօթ .  
Անարատ կյս որ խոր-  
տակեցեր զգլուխ վե-  
շապին աղօթ .  
Անարատ դշխոյ երկնի եւ  
երկրի աղօթ .  
Անարատ դուռն երկ-  
նային Երաւասաղեմի աղօթ .  
Անարատ գանձապետ  
չնորհացն Աստուծոյ աղօթ .  
Անարատ աստղ ծովու աղօթ .  
Անարատ աշտարակ պա-  
տերազմող եկեղեցւոյ աղօթ .  
Անարատ վարդ ի մէջ  
փշոց աղօթ .  
Անարատ ձիթենի ի խոր-  
հրդաւոր դաշտին Աս-  
տուծոյ աղօթ .

Անարատ օրինակ ամենայն  
կատարելութեանց աղօթ .  
Անարատ պատճառ երա-  
նութեան մերոյ աղօթ .  
Անարատ սիւն հաւատոց  
մերոց աղօթ .  
Անարատ աղբիւր աս-  
տուածային սիրոյ աղօթ .  
Անարատ եւ անվըեպ  
նշան փրկութեան աղօթ .  
Անարատ կանոն կատա-  
րեալ հնազանդու-  
թեան աղօթ .  
Անարատ խարիսխ ազ-  
տութեան մերոյ աղօթ .  
Անարատ լոյս հրեշտակաց աղօթ .  
Անարատ պսակ նահա-  
պետաց աղօթ .  
Անարատ փառք մարգա-  
րէից աղօթ .

Անարատ ուսուցիչ առաւ  
 քելոց աղօթ .  
 Անարատ զօրութիւն մար-  
 տիրոսաց աղօթ .  
 Անարատ ապաւէն խոս-  
 տովանողաց աղօթ .  
 Անարատ մաքրութիւն  
 կուսանաց աղօթ .  
 Անարատ խնդութիւն  
 յուսացելոց ի քեզ աղօթ .  
 Անարատ փաստաբան մե-  
 ղաւորաց աղօթ .  
 Անարատ ախոյեան յա-  
 հարկութիւն հերե-  
 տիկոսաց աղօթ .  
 Անարատ տուն մաքրու-  
 թեան եւ զգաստու-  
 թեան աղօթ .  
 Անարատ թագուհի յղա-  
 ցեալ առանց արատոյ  
 մեղաց աղօթ .

Գառն Աստուծոյ՝ որ  
 բառնաս զմեղս աշ-  
 խարհի ,  
 խնայեա ի մեզ Տէր :  
 Գառն Աստուծոյ՝ որբառ-  
 նաս զմեղս աշխարհի ,  
 անսա մեզ Տէր :  
 Գառն Աստուծոյ՝ որբառ-  
 նաս զմեղս աշխարհի ,  
 ողորմեաց մեզ :

Ով կյս, ամենեւին սուրբ եւ  
 ամենեւին անարատ, բարեխօս  
 լեր վասն մեր, զի արժանի լի-  
 ցուք խօստմանցն Յիսուսի Քրիս-  
 տոսի որդւոյ քոյ :

## Ա Պ Օ Թ Ք

Աստուած ամենակալ եւ  
յաւիտենական, որ շնորհէցեր  
եկեղեցւոյ քում տօնել զիառս  
անարատ յղութեան Մօր միա-  
ծնի Որդւոյ քոյ. աղաչեմք դքեղ,  
զի որք միանգամ զնոյն մե-  
ծարեալ պատուիցեն յերկրի,  
յաւիտենական երանութեան  
արժանասցին յերկինս. ամէն:

---

Մայր Կոյս, որ սուրբ գտար  
միշտ յորմէ եւ իցէ, եթէ ի կա-  
մաւորական եւ եթէ ի սկզբնական  
արատոյ. քեզ յանձն առնեմ եւ  
աւանդեմ զմաքրութիւն սրտի  
իմոյ:

ՆԵՐԿԱՎՈՐ 100 օր-ան՝ մէկ  
անգամ օրը:

---

Ի յղութեան քում, Կոյս  
Մարիամ, եղել անարատ, աղա-  
չեա վասն մեր զչայր, զորոյ զՈր-  
դին զՅիսուս Քրիստոս ի Հոգւոյն  
սրբոյ յղացեալ ծնար:

ՆԵՐԿԱՎՈՐ 100 օր-ան՝ ա-  
մէն մէկ անգամուն համար:

## Ա Պ Յ Թ Ք

Խանքելու շղացողական ինձ Աստվածա-  
հանուն Մարտաբայ:

Մարիամ Կոյս Աստուածամայր,  
տուր ինձ լինել քո սեալհական.  
Քո եմ ի վեշտս եւ ի խաչի.  
Քո եմ ի կեանս եւ ի մահու.  
Քո եմ ի վտանգս եւ ի կարօտու-  
թեան.

Քո եմ այժմ եւ յաւիտեան:  
Մայր, ի քեզ ապաւինիմ եւ  
յուսամ.

Մայր, առ քեզ հառաչեմ եւ  
կարդամ.

Մայր հզօր, լեր ինձ օգնական.  
Մայր սիրելի, լեր ինձ պաշտպան:

Մայր սիրելի, եկ եւ կաց առ  
իս մօտ.

Մայր պքանչելի, ուսո՞ ինձ առնել  
աղօթս:

Մայր բարի խորհրդոյ, ուսո՞ ինձ  
սիրել զԱստուած հոգւով եւ  
Ճշմարտութեամբ:

Մայր բարի խորհրդոյ, ուսո՞ ինձ  
առնել զկամն Փրկչին իմց  
Յիսուսի Որդւոյ քոյ, եւ սի-  
րել զընկերն իմ:

Մայր իմ, զօրացն զես՝ սիրով  
չարչարանս կրել.

Մայր իմ, օգնեա ինձ ախտից  
իմց յաղթել:

Մայր չնորհաց, դռւ ես ամսոր  
աշտարակ քրիստոնէից.

Մայր Կոյս, ապաստան մեղաւորաց  
եւ գուռն երկնեց:

Մայր Կոյս, յոյս երկրի եւ զարդ  
երկնի,

Մայր Կոյս, միսիթ արիչ վշտացե-  
 լոց եւ դրօշ ապաւինի:  
 Կոյս հզօր, դու կարող ես ինձ  
 օգնել.  
 Կոյս գիթած, դու կամիս ինձ  
 օգնել.  
 Կոյս հաւատարիմ, դու պարտիս  
 ինձ օգնել:  
 Մարիամ, սուրբդ յառաջին  
 արատոյ.  
 Հանապաղ ձեռն ի վլտանգս  
 մեղ մատո՛:  
 Մարիամ, ոչ ոք ցարդ գքո  
 պաշտպանութիւնդ հայցեաց  
 ի զուր.  
 Մարիամ, դու ոչ բնաւ զլացար  
 զորդիական աղօթիցն զտրի-  
 տուր,  
 Հապա, գոչեմ յուսալից ի վիշտս  
 եւ ի խաչի թէ ձեռն ինձ  
 տուր:

Մարիամ, դու կամիս օգնել ինձ  
 այժմ եւ յամենայն ժամ.  
 Ուրեմն, ի կեանս եւ ի մահու  
 կարդացից զԱնուն քո զքաղցր՝  
 Մարիամ:  
 Մարիամ, դու ցանկաս փրկել  
 զմեղ ի վտանգից մեղաց.  
 Աւասիկ եմ ընդ քյով պաշտ-  
 պանութեամբ, եւ ի սմին  
 կեցից եւ մեռայց:  
 Մարիամ, միջնորդութեամբ  
 Յովսեփիայ՝ պաշտպանիդ քոյ  
 քաջի,  
 Ընկալ ինձ ի Մանկանէն Յի-  
 սուսէ մինչ ի սպառ կալ առ  
 խաչի.  
 Զի երեմն երանելի մահուամբ  
 մտից յուրախութիւն իմց  
 Տեառն:  
 Մարիամ Կոյս Աստուածամայր,  
 տուր ինձ լինել քո սեպհական.

Քո եմ ի վեշտս եւ ի խաչի.  
 Քո եմ ի կեանս եւ ի մահու.  
 Քո եմ ի վտանգս եւ ի կարօ-  
 տութեան.  
 Քո եմ այժմ եւ յաւիտեան.  
 ամէն:

Ընդ հովանեաւ պաշտպանու-  
 թեան քոյ ապաւինիմք սուրբ  
 Աստուածածին, մի անտեսառներ  
 զաղաչանս մեր ի կարիս մեր, այլ  
 փրկեա զմեզ յամենայն վտան-  
 գից, փառաւորեալ եւ օրհնեալ  
 միշտ կըս:

### Ա Պ Օ Թ Փ

Յիշեա, ով կըս բազմագութ,  
 եթէ ի յաւիտենից ոք ոչ լուաւ,  
 եթէ ի քո պաշտպանութիւն ոք  
 ապաստան եղեւ, եւ զքո նպաս-

տաւորութիւն խնդրեաց եւ հայ-  
 ցեաց զքո օդնականութիւնդ,  
 եւ լքեալ թողաւ: Արդ ես այս-  
 պիսի յուսով համարձակեալ՝  
 առ քեզընթացեալ ապաւինիմ,  
 ով կըս կուսանաց Մայր, առ  
 քեզ գամ, առաջի քո մեղաւորս  
 հեծութեամբ կամ: Մի անտես  
 առներ զաղաչանս իմ, Մայր  
 Բանին, այլ լուր հաշտութեամբ  
 եւ ուկն դիր. ամէն:

‘Երանուն 300 օդ-ան՝ ա-  
 մէն մէկ անգամուն համար:

Օրհնեալ է սուրբ եւ անարատ  
 Յղութիւն երանելոյ կուսին  
 Մարեմայ Աստուածամօր:

‘Երանուն 300 օդ-ան՝ ա-  
 մէն մէկ անգամուն համար:

Ո՞վ Մարիամ յղացեալ ա-  
ռանց մեղաց, աղաչեա՛ վասն մեր՝  
որք ապաւինիմքս առ քեզ:

‘ԵՐԿՐՈՒ-ՌԻ-Ն 100 օդ-ան՝ մէկ  
անգամ’ օրը:

### Ա Դ Օ ԾՈ Ք

Համա ընտանելոյ զման բարեւ:

Ո՞վ Մարիամ յղացեալ  
առանց արատոյ, աղաչեա՛ վասն  
ապաւինողացս առ քեզ: Ո՞վ  
ապաստան մեղաւորաց, Մայր  
հոգեվարաց, մի՛ թողուր զմեղի  
ժամու մահուան մերոյ. այլ ըն-  
կալ մեզ կատարեալ ցաւ, ան-  
կեզծ զղջումն, զթողութիւն մե-  
ղաց մերոց, զարժանի ընդունե-  
լութիւն սուրբ Թոշակի եւ  
զկազդուրելն խորհրդով վերջին

Օծման, զի կարող լիցուք ելա-  
նել համարձակութեամբ առաջի  
աթոռոյ արդար այլ եւ ողորմած  
Դատաւորին՝ Աստուծոյ եւ Փրկչին  
մերոյ. ամէն:

‘ԵՐԿՐՈՒ-ՌԻ-Ն 100 օդ-ան, մէկ  
անգամ’ օրը:

Փառք պատիւ եւ երկրպագու-  
թիւն ամենասուրբ Երրորդու-  
թեան, Հօր եւ Որդոյ եւ Հոգ-  
ոյն սրբոյ. այժմ եւ միշտ եւ  
յաւիտեանս յաւիտենից. ամէն:



## Հրատարակութիւններ

Եղբայրութեամ

Անարատ Յղովթեամ Ա. Կոսիհան :

1. Մէզէպէ Գարլը սէօղէրէ Տէվապէր. Տէրվլշեան Հ. Մանուէլ Վ. ին թէրճամիւն. 1866: Թղթկղմ. 1.50, կիսլթ. 1.75, կղմ. 2.50:
2. Թէօդէրեար Մարիամ Մագդաղենացինին կէձէրի. իթալիան լմսանընասան Կ. Վ. ին թէրճամիւն. 1862: Թղթկղմ. 1.—, կիսլթ. 1.25:
3. Հինն Աստուած: Գոնրատ Պողանենի ժամանակակից վէպ. 1872: Թղթկղմ. —.35, կիսլթ. —.50:
- 3a. Ալլահը քատիմ: Գոնրատ Պողանենին սիր հիբեացէսի. 1872: Թղթակաց. —.50, կիսլթ. —.75, լթկղմ. —.90:
4. Ցիսուս Էֆէնախմիզին միւսպէր երւրէինին եօրթուսունա տօգուզ կիշլիք հազըրլագ. Առաքելեան Կ. Վ. ին թէրճամիւն. 1874: Թղթկղմ. 1.—, կիսլթ. 2.25, լթկղմ. 2.50, կղմ. 2.80: կւկղմ. 3.—, սոկել. 5.—:

5. Քրիսթիան թէֆէքքիւթէրի: Տէրվլշեան Հ. Մանուէլ Վ. ին թէրճամիւն. 1875: Թղթկղմ. —.75, կիսլթ. 1.—:
6. Աղօթք Պատրաստութեան եւ Գոհութեան սրբոյ պատարագի, վան իւրաքանչւր աւուր շաբաթու: Թարգմ. ի Հ. Թաղէէ Վ. Թոռնեան. 1880: Թղթակաց. 1.—, կիսլթ. 1.25, լթկղմ. 1.50, կղմ. 2.—:
7. Ենի տուս քիթապը. 1889: Թղթկղմ. 2.—, կիսլթ. 2.25, լթկղմ. 2.45, կղմ. 2.90, կւկղմ. 4.50, կւկղմ. սոկ. 6.—:
8. Լէյալիի Օգոստինոս (Գիլերք Ս. Օգոստինոսի) Ենդարէ եպիսկոպոս Առաքելեան Կարապետ Վ. ին թէրճամիւն. 1881: Թղթկղմ. 2.—, կիսլթ. 2.30, լթկղմ. 2.60, կղմ. 2.90:
9. Լուրս մւճիպաթլարը: Ենդարէ եպիսկոպոս Առաքելեան Կարապետ Վ. ին թէրճամիւն. 1881: Թղթկղմ. 1.50, կիսլթ. 1.75, կղմ. 2.50:
10. Աղօթագիր պաշտօնասիրաց սրբոյն Յովենիայ Աստուածահօր: Ի Հ. Պետոնդ Վ. Յովենանեան 1883: Թղթկղմ. 2.—, լթկղմ. 2.50, կղմ. 2.80, կւկղմ. 4.20, կւկղմ. սոկ. 4.50:
11. Ֆիքիր տուասնա միւթէ էալիդ հագդ մաստուէր Թ. Ա. Ցէրվլշեան Մանուէլ Վ. ին թէրճամիւն. 1884: Թղթկղմ. —.50, կիսլթ. —.75, լթկղմ. 1.—, կղմ. 1.25:
12. Տուա քիթապը աղիզ Պիկերին վէ Ս. Յովենին իւպատէթկի զարլարը էշին: Ենդարէ եպիսկոպոս Առաքելեան Կարապետ Վ. ին թէրճամիւն. 1884: Թղթա-

- կազմ. 2.—, կիսլթ. 2.25, լթկզմ. 2.50,  
կիլմ. 2.85, կշկզմ. 4.50, կշկզմ. ոսկ. 6.—:
13. Մեկնութիւն (համառօս) նկարագրաց  
ճշմարիտ կրօնի, գրեալ ի ճէրտիլ կարդ.  
թրդմ. ի Սամոնէլէ Ա. Գալթընեան.  
1885: Թղթկզմ. —50, կիսլթ. —75:
14. Մարկեղնոն կամ Եկեղեցի առ. Կոս-  
տանդինսոսի: Թրդմ. Հ. Ա. Աւգե-  
րեան. 1886: Թղթկզմ. 1.—, կիսլթ. 1.25:
15. Քւյուէ Մայիս այլ, եամօն նեղթարզ  
Մահի Մէրիէմ. 1888: Թղթկզմ. 1.—,  
կիսլթ. 1.25, լթկզմ. 1.50:
16. Նմանութիւն Յիսուսի Քրիստոսի: Թով-  
մա Գեմքայի: Թրդմ. Հ. Թաղէոս Ա.  
Թոռնեան. 1894: Թղթկզմ. 3.50, կիսլթ.  
3.75, լթկզմ. 4.—, կիլմ. 4.35, կշկզմ.  
ոսկ. 5.20:
17. Հոգի կրօնաւորական, 1894: Թղթկզմ.  
1.50, կիսլթ. 1.75, լթկզմ. 2.—, կիլմ.  
2.35, կշկզմ. ոսկ. 3.20:
18. Լարեւեան Լիտանիայի վրայ Մտածա-  
կաններ: Թարգմ. Սահփան. Ա. Մել-  
քսինեկելեան, Արքեպիսկոպոս Տիմոֆիոյ  
(Հրժր. Եպի. Կանոյ), 1896: Թղթկզմ.  
3.—, կիսլթ. 3.25, լթկզմ. 3.50, կիլմ.  
4.—, կշկզմ. ոսկ. 5.—:
19. Մատենի Մարեմայ Գատերաց Շարե-  
պաշտական Միութեանցու ի Տ. Ալբ.  
Փասէրի: Թրդմ. ի Հ. Մատուէլ Մա-  
շուրեան. 1898: Թղթկզմ. 1.50, կիսլթ.  
1.75, լթկզմ. 2.—, կիլմ. 2.50, կշկզմ.  
ոսկ. 3.50:
20. Ակզբոնք կրօնաւորական կենաց: Թրդմ.  
Հ. Ա. Ա. Սէֆերեան. 1898: Թղթկզմ.  
1.—, կիսլթ. 1.25, լթկզմ. 1.50, կիլմ.  
2.—, կշկզմ. ոսկ. 3.—:

21. Ս. Ա. Լիեռուորեայ Աղօթք գլուխոր  
միոյն երանութեան համեւու: Գերմա-  
ներէնէ թրդմ. Հ. Գ. Փանչիկեան 1899:  
Թղթկզմ. 1.—, կիսլթ. 1.25, լթկզմ.  
1.50, կիլմ. 2.—, կշկզմ. ոսկ. 3.—:
22. Համառօս Պատմութիւն Զարդարանաց  
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ըստ  
Կատարինեայ Հմերիք, Հանդերձ կարձա-  
ռօս պատմութեամբ Վարուց նոյն կու-  
մին Թղթկզմ. 2.—, կիսլթ. 2.50, լս-  
թակազմ 2.75:
23. Արբազն Յարի կամ Ընդհանրական  
Յորեւեան Հազար իննհարիր ամին:  
— Հ. Բ. Պ. — Թղթկզմ. 0.25, կիսլթ.  
0.50:
24. Ժամացոյց շարձարանաց կամ մուծու-  
թիւնք եւ իղձք վասն տանջանացն Յի-  
սուսի Քրիստոսի ի սուրբ Ալքոնդոս Լի-  
գորի Թրդմ. Հ. Թաղէոս Ա. Թոռնեան,  
Եղեալ Յաւելուած մի. 1900: Թղթկզմ.  
1.50, կիսլթ. 1.75, լթկզմ. 2.—:
25. Իննօրեայ պատրաստութիւնք Տօնից Ս.  
Կուսին եւ Սրտին Յիսուսի Հանդերձ  
յաւելուածով աղթից: Յօրինեալ եւ  
Հաւաքեալ ի Հ. Յակովայ Ա. Ք. Քօ-  
սեան 1901: Թղթակազմ 1.—, կիսլթ.  
1.25, լթկզմ. 1.50, կիլմ. 2.—:
26. Թագավորութիւն Սրտին Յիսուսի, 1902:  
Թղթակազմ. —.50, կիսլթ. —.75:
27. Նորազարդ աշխարհքը Ս. Պատարագի,  
Գոհութեան Խորհրդոյ եւ Հաղորդու-  
թեան վրայ Ճառեր: Յովեկի Ա. Վ.  
Մելքիսեդեկեան 1903: Թղթկզմ. 3.50,  
կիսլթ. 4.—:

28. Ե Ամառակ Յիսուսի յոբելնի Անա-  
րատ Յղութեան Մարտինյ յամէ 1854  
Դեկտ. 8, յամն 1904 Դեկտ. 8:  
Թղթկար. 1.—:

(Գիշերն Փրանքով են:)



ՀՀ Ազգային գրադարան



NL0165353

7005

281  
12-77